

ՆՈՐՈՐ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԿՆՈՐ ՕՐԻՒ

ՆԱԽԱ ԿԱՐ ՈՒՆԷ ԲՂԹԱԿՈՒԹՐԻՆ
ՊԵՏԵ Ի. ՈՒՂՂԻՆ ԵՈ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի
ԳՈՂՏԻՔԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Չեռապրնեքն ևս չեն դարձալր,
ԱՐՏՕՆԱՏԵՐ Ժ. ՄԻՆԵԻՔ

Լ Ր Ս Պ Ի Ր
ԱԶ Գ Ա Յ Ի Ն, Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն
ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Table with subscription rates for different regions and terms. Columns include 'ԵԳԻՊՏՈՍ' (Egypt), 'ՂՐՇ. ՈՂՋ' (Other regions), and prices for various durations.

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ ՊԵՏԵՐԸ

Եթէ կուզենք որ մեր արդի հասարակութիւնը շուտ կրթենք ու լուսաւորենք շաւղին մէջ առաջնորդենք, միայն մեր մանկուայն համար դպրոց բանալով պէտք է բաւականանանք, պէտք է որ հիմնենք նաև Գիշերային դասարաններ, ուր երթան կրթութիւն ստանան նաև տարեքստ և չափահաս ազգայիններ: Այս, պէտք է որ կրթենք այդ ազգայինները, որոնց՝ ժամանակին իրենց ծրարողները հարկ եղած կրթութիւնը ստանալ չ'ըլլալուն, ազգա և ազգային մնացած են, ու դժբաղդ կը համարուին այսօր, որովհետև իրենց բնական աշխարհին ինչ ըլլալը չեն գիտեր, զիրենք շրջապատող իրերուն և առարկաներուն էութիւնը չեն ըմբռններ, որոնցմէ ոմանք օտար լեզու չգիտնալէն զատ՝ իրենց մայրենի լեզուն իսկ չնորհարով կարգալ գրել չեն գիտեր, ըլլան գործաւոր, խանութպան, սեղանաւոր, վաճառական:

հետև որքան պոռոտախօս ազգայիններ շուտ ունինք, այնքան ալ զուհողութիւն ընող ազգասէրներ քիչ ունինք մեր մէջ:

Մինչդեռ զիշերային դասարանի հիմնարկութիւնը և տեսականութիւնը այնքան խրատչելի է, բաւական է որ մի քանի ուսուցիչներ ստանձնեն անձնուիրաբար դասախօսել և մեր կարօտ ու չափահաս ազգայիններն ալ չի զլանան հետեւելու այդ օգտակար դասերուն:

Արտասահմանի մէջ 1886 թուականին առաջին ըլլալով «Մասնաց Ազանի» բարձրացուց ձայնը մեր տարիքոտ ազգայիններու կրթութեան գործին ինպատու կըր Գարբիէլ Այվազովաքի աշխատակցութեամբ Մարտիտա Վ. Ռուբինեանի (արդի Գուրտոնի իշխան Լուսինեան) սկսաւ հրատարակել այդ անդրանիկ հանդէսը փարիզի մէջ, էջեր և սիւնակներ նուրից այդ նպատակին:

Ահաւասիկ հատուած մը որ իր կարեւորութեամբը մեր աչքին զարկած ըլլալով կ'արտասպինք հոս:

«Տարբեր բնաւ արդեւք չէ, մարդ ամեն ժամանակ կրնայ ամեն ուզածը սովորել, բաւական է որ փափաք ու հաստատուն կամք ունենայ: Որպէս զի ուսում և գիտութիւն սովորել ուզող չափահաս ազգայինք իրենց տարիքին մեծութեանը նայելով չի յուսահատին, թող յիշեն միշտ մեծանուն Գերմանացի Պոէրհաւ բժիշկը, և իրենց խրախուսիչ օրինակ առնուն զիրքը, քաջ գիտնալով որ ոչ թէ հասակէն, այլ հաստատուն կամքէ, անդու շանքէ ու անխոնջ աշխատութեան կախեալ է մարդու կրթութիւնը ու յառաջգիտութիւնը:

Տասնեութերորդ դարուն ամենէն անուանի բժիշկն էր Պոէրհաւ, և բժշկութեան արուեստը բողբոջին կերպարանափոխ ըրաւ ու բարեկարգ:

գեց. զիտէք արդեւք որ բժշկութիւն սովորելու սկսած ժամանակը բանի տարեկան էր. քառասունը անցեր էր. և ինչպէս որ ուսովի ու բան չգիտցող մարդկանց սովորութիւնն է ամեն բան ծաղրել, իր բարեկամներն ալ վրան ծիծաղելով կ'ըսեն եղբ թէ «Պոէրհաւ բառասունէն ետքը բժիշկ պիտի ըլլայ, բայց ափսոս որ զմեզ պիտի չբժշկէ» և սակայն վրան շատ չանցաւ, իրենք ալ համազուտեցան որ տարիքին չի նայիր եղբ գիտութիւնը, և երջանիկ կը համարէին իրենք զիրենք որ այնպիսի բաշարուտա բժիշկ բարեկամ ունին, որ զիրենք ծանր ու վտանգաւոր հիւանդութիւններէ կ'ազատէր»:

Արդարև շատ ճշմարիտ են այս ըսուածները. չէ՞ մի որ Սթէֆէնսըն և ուրիշ մի քանի գիտուններ բաւական տարիքին առած էին, երբ ուսմունք և գիտութիւն սովորել սկսան: Թերևս առարկուի թէ Պոէրհաւ, Սթէֆէնսըն և այս կարգի գիտուններ մէյմէկ հանճարներ են, որոնք իրենց բնական ձիրքերուն զօրութեամբը յաջողած են: Շատ լաւ, մեր նպատակն ալ գիշերային դասարանի մէջ հանճարներ պատրաստել չէ, այլ պարզապէս ազիտութեան մէջ մնացած մեր չափահաս ազգայինները կրթել, զարգացնել և ինչ ինչ կարեւոր գիտելիաց վրայ լուսաւորել:

Եւրոպայի մէջ այսօր որքան զբաղողներ կը բացուին պատիկ ազգաները կրթելու համար, այնքան ալ գիշերային ժողովրդական դասարաններ կը հիմնուին ժողովրդին ուսովի և տգէտ դասակարգը լուսաւորելու համար, և օր պիտի գայ որ շնորհիւ այս ներգործիչ դրութեան, Եւրոպայի ամենէն յետին գիւղին մէջ իսկ մատով պիտի ցուցուին հին սերունդի ուսովիները. ըսել է թէ չափահասներուն և ուսովիներուն կրթութիւնը մեծ դեր կը խաղայ ազգի մը կրթութեան զարգացմանը գործին մէջ:

Ժողովրդի դասակարգի կրթութեան զերազանցաբար հոգ տանող երկիրը այսօր Ամերիկա կը նկատուի: Նիւ-Եօրքի մէջ ոչ միայն գիշերային դասարաններ, այլ նաև բազմաթիւ ժողովրդական թատրոններ հիմնուած

են. ամեն կիւրակէ արհեստաւոր և գործաւոր իրենց ընտանիքներովը ու զաւակներովը կը լեցուին այդ թատրոնները, որոնց բեմին վրայ խիստ հրահանգիչ բարոյական բիէսներ կը ներկայացուին ժողովրդին: Պարզապէս դասարանէ մը վար չեն մնար այս կարգի թատրոնները:

Այս տեսակ թատրոններու մէջ երբէք չէք տեսներ դայթակղեցուցիչ և կամ մուրեցուցիչ արարուածներ. լոկ մարդու բարոյականին վրայ ներգործող կտորներ են որ ընտրողաբար կը ներկայացուին հոն:

Գրադարաններն ալ իրենց տեղը ունին. Ամերիկեան հանդէսի մը տեղեկութեանց համեմատ՝ երեք հազարէ աւելի գրադարան-ընթերցատուններ կան որոնք տարին 25,000,000 գիրք կը բաժնեն իրենց բաժանորդներուն: Պոսթընի մէջ ընթերցատուն մը չ'ընուած է, ուր առանց նեղուելու երկու հազար հոգի կրնան տեղ տոնուլ:

Հոս Գահիրէի մէջ մեր ըթին տակ Յոյներն ալ դեռ ամիս մը չկայ գիշերային դասարան մը հաստատեցին: Օրէրա Պառին կից շէնքին մէջ՝ Յունական Գիւլպի սրահներուն մէկ մասը այդ դասարանին յատկացուցաւ, ուր ամեն գիշեր անձնուիրաբար կ'երթան դասախօսել Յունական Էպէթ վարժարանի ուսուցիչները:

Ինչ եռանդ և ոգևորութիւն. զացէք օր մը, զիշերը ժամը 10 ու կէսին և պիտի տեսնէք որ 100է աւելի մարդիկներ գործաւոր, արհեստաւոր, խանութպան կը յաճախեն հոն և ամեն գիշեր մէյմէկ փոքրիկ պաշար ստանալով կը վերադառնան ուրախութեամբ իրենց տունը. առնց աչքին ոչ սրճարան կ'երևայ և ոչ այլ ինչ: Յերկը գործ, գիշերը գրական և գիտական զբօսանք:

Ուրեմն ինչո՞ւ չ'օգտուինք առիթէն և ինչո՞ւ մենք ալ մեր նմաններուն պէս չունենանք գիշերային դասարաններ, բարոյական թատրոններ, գրադարաններ հին:

Հիմնականիմայ մեր նիւթը գիշերային դասարանի հիմնարկութեանը վրայ կայանալով, մեծ յոյս ունինք թէ մեր ազգային վարժարանի ուսուցիչները, խրախուսելի օրինակ առ-

(*) Թերթ ըսելով հասկնալ պէտք է շնորհով և օրինաւոր թերթ որ բաւիմ բովանդակ նշանակութեամբ կրնայ օգտակար ըլլալ համրութեան, և ժողովրդի տրգէտ դասակարգին իր դասարան ծառայել իր հրահանգիչ պարունակութեամբը:

(**) Թատրոն ըսելով՝ հասկնալու ենք ժողովրդական թատրոններ որ բարոյական թատերգութիւններ կը ներկայացուին ժողովրդի օրինակելի համրիսացող:

նեղով, պիտի ընդունին անձնուիրա-
բար մի բանի ժամ նուիրել շարաթը:

Նմանապէս կը սիրենք յուսալ թէ
մեր չափահաս ազգայիններն ալ ի-
րենց զիշերուան պտուղով ժամերը
փոխանակ աստիճաններն և սրճա-
բաններու մէջ անցնելու, պիտի փո-
թան ևս անոք ցոյց տալ զէպ ի այն
կրթական և լուսաւորիչ յարկը՝ ո-
րուն զոները մտաւորապէս պիտի
բանանք ժողովրդին իր Գիշերային
Դասարան:

ԿՆՈՋ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

Գոյներու և արտաքին ձևերու համեմա-
տութեան ներգաղափարները ու զեմքին
զօրաւոր, բնական արտայայտութեան մէջ
է ուր կը գտնուին արուեստագետին համար
Գեղեցիկն սարբերները: Նկարիչ մը կամ
արձանագործ մը, զգեցելին աննկարական
ցոլբերովը ողորդած ու բնութեան խորին
խմտաստիւթեամբ հմայուած, երբ իր
երևակայութեանը միջոցաւ մարմին կուտայ
Գեղեցիկին, ասով բարձրիկ տարբեր
գործ մը կը կատարէ, քան թէ անոնք,
որոնք առողջապահի տեսակետով մարմին
արտաքինն ներս, կեանքի խորհրդաւոր և
ընդամենը ծանօթ, տարբեր կերպով կ'ըմ-
բռնեն Գեղեցիկը:

Բնականները, ինչպէս նաև առողջաբան-
ները, անհատի մը զործարանաւորութեան
մէջ տեղի ունեցող կանոնաւոր (normal)
գործողութեանց կատարուելուն հանդէպ կը
տեսնեն գործարանաւորութեան առողջու-
թիւնը, որուն մէջն է իրենց համար իւրա-
բանչոր զործարանաւոր կազմուածքի զե-
ղեցիկութիւնը:

Գեղեցիկ մասին առողջապահի և ար-
ուեստագետի ըմբռնումը և ճաշակը թէև
արտաբնական այնքան տարբեր կը թուին ը-
լալ իրարմէ, սակայն երբ լսուի կերպով
ձեռնարկներ Գեղեցիկը տարբարակելու, պի-
տի տեսնենք թէ կան կէտեր որոնք ընդ-
հանուր են Գեղեցիկը առողջ կերպով ըմ-
բռնող ամեն գաղափարի մարդոց համար:

Գաղափարիչ Գեղեցիկութեան մը ըմբռ-
նումն զուրս, որով հիմնումն իսկ ի յախ-
ծի, անկապաշաներու և սպառնալիանե-
րու երամակներ կը կարծեն զգեցելի տե-
սարանի մը վայելքները ունենալ, դաս-
կան առողջ աշխարհ մը այսօր կ'ընդհան
զգեցելութեան իր հիմ կ'ընդունին անոր
առողջութիւնը: Անկարելի է որ Միլլի
Վեյն/ուր կերտուած ասան արձանագործը
իր աչքին առջև կամ մտքին մէջ վախ ու
սինդը կին մը իրեն իբր իտէպ ունենայ:
Երգողական միջոցներու մէջ հին թէ նոր
նշանաւոր արուեստագետներու կ'ընդհան
նկարներն ու արձանները ցոյց կուտան թէ
միշտ առայդ ու բարեձև կ'ընեն են որոնք
մեծ արուեստագետներու գլուխ գործոցնե-
րուն ներշնչարանները եղած են, ու գիտու-
թեամբ կրնանք հաստատել այսօր թէ առողջ
կ'ընեն միայն կրնան առայդ ու բարեձև
ըլլալ:

Բայց ըլլալ թերևս հարցնողներ թէ կ'ո՞ր
մը համար միթէ առաքելութիւն (verthe)
մըն է առողջ ու բարեձև ըլլալ: Անոնք որ
գիտնականի մը լրջութեամբ կեանքի ու ա-
նոր երեւոյթներուն խորհրդակցութեամբ ըմ-
նութեան մը կ'ընթարկեն, և ամեն բանի
փոխանակ սպտաւոր լեռնաբան ուսումնա-
սիրելու կը մտնեն աշխատութիւններու մէջ
ամեն բանի ձեռնարկը և իսկնչուան զրա-

նելու համար, այդ անձերը ամենքն ալ,
հակառակ բարոյախօսներուն ու հակառակ
Մեմբրի/ուսներուն, որոնք բնութեան պատ-
ճառական (causale) օրէնքներուն հեղինա-
կութիւնը չեն բնութենի, պիտի պնդեն թէ
զգեցելութիւնը կ'անընդ յեղաշրջման զիսա-
ւոր միջոցը պիտի մնայ միշտ, ու կ'ընեն ալ
իր բնութեան կողմէն զգեցելութիւնը
պիտի ունենայ միշտ, իր արեւաբնութեան
իբր ամենն ազգու միջոցներն մէկը գոր-
ծածիլու:

Կ'ընեն իր բարոյական հեղինակութեանը
միացնելով նաև զգեցելութիւնը, որուն հա-
մար սիրով մը կը ծնինք ամենքս ալ,
կրցած է ժամանակակից ընկերութիւններու
մէջ քաղաքակրթիչ մեծագոյն գերերն մէկը
խաղալ: Գաղաքակրթութեան պատմութեան
մէջ ալ կը տեսնենք թէ նոյն իսկ բարբա-
րոս ժողովուրդներու մէջ, ուր ֆիզիքական
ուժը իբր զերգոյն տառաքելութիւն մը գնա-
հաստած է, կ'ընեն իր միասնեան տարբու-
թեամբ թէև մարդուն ստորիկը, բայց կրցած
է իր գոյութիւնն ու պիտի պահպանել, ու
նաև ազգեցելութիւն մը ունենալ մարդուն
վրայ, անոր խզուութիւնը սկստացնելով:

Ինչպէս որ մեր օրերու մարդուն կողմ-
էն աւելի բարձր ու բազմակողմանի գար-
ձած է քան թէ նախապատմական մարդու-
նը, նմանապէս կ'ընէ կողմն ալ՝ հետեանք
քաղաքակրթական պահանջներու՝ հարկաւ
այլևս չի սահմանափակուիր անական դա-
ժանութիւնը ազատելու, հաշմելու մէջ:

Ինքը իբրև կին (բառին բովանդակ նշանա-
կութեամբ) աւելի մեծ քաղաքակրթական
գերեր ալ ունի կատարելու: Եւ որպէսզի
իր այդ գերերուն մէջ չ'ընթանայ, պէտք է
որ անիկա ներկայանայ մեզի իր բովանդակ
առաքելութիւններով, որոնց զիսաւորներէն
մէկն ալ է իր զգեցելութիւնը: Մեր ժա-
մանակին, ուր մտաւոր և ընկերական ա-
մենն շահական ուսումնասիրութիւնները կը
կատարուին, դիտուած է որ այն ազգերը,
որոնց մէջ զգեցելի կ'ընեն շատ աւելի են,
ոչնիս աւելի ազնիւ և հաճոյական նկարա-
գիր մը: Կ'ընէ զգեցելութիւնը ոչ թէ միայն
ֆիզիքական առաքելութիւն մըն է, այլ ունի
նաև իր ընկերական, բարոյական բարեբար
հետեանքները:

Կ'ընէ համար կական պոյման մըն է որ
ուրիշ առաքելութիւններու հետ նաև զգեց-
ելի ըլլայ. և զգեցելի ըլլալու համար ան-
հրաժեշտ է որ կ'ընէ մը ամեն բան առաջ
առողջ ըլլալ:

Ինչպէս սկիզբն ալ շեշտեցինք, զգեց-
ելութեան հիմը մեղի համար միշտ առող-
ջութիւնն է, և ոչ թէ շարժումով ձեռք ան-
ցուած անբնական սեթեթեթեթ, որոնք տը-
գել են և հակառողջապահական:

Այս առիթը սակայն թող չ'սխալեցնեն
մեր աչքի ընթերցողներն, քանի որ
բնութիւնը իր պարզութեամբ մէջ հաստա-
րութեան սկզբունքը բնաւ չ'ընդունիր: Պէտք
է գիտնալ թէ առողջապահական բազմա-
կողմանի օրէնքներու գործադրութեամբ՝ ոչ-
զգեցելիներն ալ կրնան հաճոյալի դառնալ,
ինչ որ զգեցելութեան յայտարար նշանն է:

Ինչպէս ընկերութիւններու մէջ, նմանա-
պէս բնութեանն ալ կան անժառանգներ,
որոնք ժառանգական կամ պիտուածական հի-
ւանդութեան մը հետեանքով տկարացած են
կամ հաշմանգամ: Իսկ ասոնցմէ զուրս, ո-
րոնք ամեն սեղ փորքամանութիւն մը մի-
այն կը կազմեն, կան ահագին երամակներ
կ'ընեն, որոնք իրենց առողջապահական
օրէնքներու մասին ունեցած ազգաութեամբ
Ղգային տարապիտեան, պնտրութեան դա-

տաղարտուած էակներ են, զորի իրենց
զեմքին վրայ զգեցելութեան արտայայտու-
թեան, և որոնք զգեցելի կ'ընեն կրնային
ըլլալ եթէ առողջ ըլլային: Ու նորէն որ-
քան զգեցելի կ'ընեն կան, որոնք հակա-
առողջապահի կ'ընեցազով մը հետոյ հետե
խամ-
բած, ազգեցած են:

Եթէ կ'ընէ զգեցելութիւնը՝ մասնաւոր իր
առողջութեանը մէջ կ'ընենք տեսնել, չկար-
ծուի սակայն որ մեր իտէպն է Հոսթիլացի
կամ Սպարտացի կ'ընէ մը տկարը, որոնց
զիսաւոր առաքելութիւններն էին մկաններու
կորով մը, մարմնական զեղ ու հրապոյր:
Մեր դարուն համար, միայն այդ տեսակ
առաքելութիւններով կ'ընէ մը շատ ձտիւրոյ
էակ մը պիտի ըլլար՝ անկարող իր ընկե-
րական մեծ գերը կատարելու: Ժամանակա-
կից կ'ընէ՝ մտաւորական գարգացում ու բա-
րոյական կորով պէտք է ունենայ, որոնց
միասնալով նաև մարմնական առողջութիւնը՝
պիտի կազմէր մեզի համար ճշմարիտ իտէպ,
զգեցելի կ'ընէ:

Այս կէտը Եւրոպացի կ'ընեն շատերն
ալ սխալ հասկցուած է: Ժամանակակից
մտաւոր գարգացումով կ'ընէ մը համար պատ-
ճառ մը չի կայ որ գարալիքի ըզձան-
քով մը արհամարհ մարմնական առողջու-
թիւնը, և ջիղերու տարապայման զրգիտի
մը մէջ հաշմած ու մաշած, իր բոլորով
առողջութեամբ մարմինը հրապոյրները ըզ-
գեցաներու ճոխութեան մը մէջ փակել ու-
ղեղով, պտուղիկի մը երեսից ստանայ:

Կ'ընէ ամեն բան առաջ իբր ամուսին
և իբր մայր մեծ կ'ընէ մը ունի մարդկա-
յին ընկերութեան մէջ, և որպէսզի իր այդ
կողմը անթերի կերպով կարող ըլլայ կա-
տարել, անհրաժեշտ կերպով պէտք ունի
առողջութեան:

Կ'ընէ զգեցելութեան մասին մեր այս
ընդհանուր տեսութեամբ նպատակ ունենք
շեշտել ամենն աւելի այն կէտը թէ ինչպէս
երբ կ'ընէ մը ժառանգական և կամ դիպու-
ճական օրէն, հիւանդութեան մը յառաջ եկած
թերութիւն մը չ'ունի և առողջ է, ու զիտ
իր առողջութիւնը ինքնալ կ'ընայ ապահով
ըլլալ թէ իրմէ պահանջուած զգեցելութիւնը
արդէն անի: Միայն, որպէսզի ինքը կա-
տարել անհատ մը ըլլայ, պէտք ունի ճշ-
մարիտ, առողջ գաղափարական, պարզ
հոգիի մը, ճաշակաւոր երեւոյր ստանալի
ու բնական և շնորհալի շարժումներու:

S.Յ. ԴԱՄԻՅԱՆ

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ԱՂ.ԲԱՏԱՆՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԳԱՀԻՐԻ

Աղբատտինամ ընկերութեան Ընդ-
հանուր ժողովը պիտի գումարուի
յառաջիկայ կիրակէ, 7 Ապրիլ 1904,
կէս օրէ յառաջ, Եկեղեցական արտ-
ըողութեան անմիջապէս յետոյ, աղ-
գային մանկապարտէզի սրահին մէջ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Միւսմայ հաշուետուութիւն
Գործ. ժողովոյ:

Դիւանս կը հաւատայ թէ Պատ.
անգամը պիտի փութան ներկայ ըլ-
լալ սոյն նստին իրենց ընկերական
պարտականութիւնը կատարելու հա-
մար, մասնաւոր պէտք է քաջ հա-
մուրհիւն թէ ամբողջ տարեշրջանի մը
մէջ իրենց մի քանի վայրկեաններու

զահողութեամբ միայն ժողովը պիտի
կրնայ մեծամասնութիւն ունենալ, ինչ
որ անհրաժեշտ է արուելիք որոշմանց
վաւերական ըլլալուն, առանց այդ
մեծամասնութեան ներկայ եղող ան-
դամներն ալ անգործութեան պիտի
գատապարտուին:

Ի գլխաց Դիւանի Ընդհ. ժողովոյ
Աղբատտինամ ընկերութեան
Ատենապետ Ատենապետ
Լ. ԿԻՍԻՒՆԵԱՆ Լ. ԿԻՍԻՒՆԵԱՆ
Գահիրէ 2 Ապրիլ 1904

Վարչութիւն
«Նոր-Օր» լրագրի

Կը ինդընք Գառ. վարչութեանէդ
որ բարեհաճի հետեւալը հերքելիա-
լիլ հանրօրուտ օտկանիդ մէջ:

Որբատտինամ ընկերութեան Գործ.
ժողովս շնորհակալութեամբ ստացու-
հետեւալ նոտիքատուութիւնները.

Ալիուսփայլ Տիկնայր	Գ. Ո.
Ալիուսփայլ Գ. Երզուպեան	97 50
Եւզիմէ Տ. Երզուպեան	77 15
Մարի Ա. Պետրոսեան	38 50

Ի գլխաց Գործ. ժողովոյ
Գանձապետ Ատենապետ
Կ. ԵՐԶԱՍԵԱՆ Ա. Մ. ՊԵՏՐՈՍԵԱՆ
Գահիրէ 2 Ապրիլ 1904

Աղգային Առաջնորդարանի Դիւա-
նատունէն մեզ հաղորդուած է ցանկ
մը հանդիսակալութեան ի նպատակ
լրատեան վործարանի ազգութիւն ման-
կանց, զոր յառաջիկայ թիւով պիտի
հրատարակենք:

Այլի Տիկն ՍԻՐՎԱՐԳ ՄԿՐՏԻՉ-
ԵԱՆ և զաւակունք «Նոր-Օր» ի մի-
ջոյալ իրենց շնորհակալութիւնները
կը յայտնեն ամեն անոնց որոնք հա-
ճեցան ներկայ գտնուիլ ողբացեալ
Տիւր ՏԻՐԱՆ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ յու-
ղարկաւորութեան և իրենց ցաւակ-
ցական զգացումները արտայայտեցին
այս տիւր առթիւ:

ԱՐՏԱՒԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊՕԵՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ
Փարիզի ծանօթ հրատարակալի-
ներէն Պ. Հանրի Ռոշֆոր, որ արդէն
ամենուն ծանօթ է, գաղափարը յղա-
ցած է միջազգային վիճակահանու-
թիւն մը ընելու, որուն մասնակցե-
լու հրաւիրեալ են Աւստրիոյ, Ռու-
սիոյ, Պարսկաստանի, Սպանիոյ, Երե-
ւանի, Եթովպիոյ, Ամերիկայի և Ֆրան-
սայի կառավարութիւնները: Բոլոր
այս կառավարութեանց երեսփոխ-
անական ժողովներուն պիտի առաջար-
կուի որպէսզի միջամտեն այդ վի-
ճակահանութեան իրենց սեպհական
երկրին մէջ մտնելուն: Գրումազուլը
լինելու է քան և հինգ միլիոն ֆր.,
մէն մի տոմսակը պիտի արժէ 100
ֆր. և կամ 400ին կառորակները՝ 20,
10, 1 ֆր.: Վիճակահանութիւնն յե-
տոյ տոմսակներու մէկ երրորդ մասին
գրամը պիտի վերագարձուի, ինչ որ
կ'ընէ 8 միլիոն. մնացածէն՝ 7 միլ-

ինն պիտի բաշխուի իբր պարզ և սովորական բան, իսկ 10 միլիոնը պիտի յատկացուի Պօլիտեխնիկական ուսումնական գարու համար:

Վիճակահանումներն շտաբները ամենամեծ զուգահեռներն են մէկ միլիոն, երկու հարիւր հազար, հարիւր հազար, տասը հազար և հազար ֆր.:

ԹԱԳԵՐՈՒ ՅԱՐԿ

Փարիզի մէջ լուր տարածուած է մի քանի անդամներ թէ հանգուցեալ Միլան թագաւորը քանի մը անգամ փարիզէն փախած է իւր պարտատէրերու ձեռքէն ազատելու համար:

Կըսուի նոյնպէս թէ յիշեալ թագաւորի թագաւորը ուզած է իւր թագը զբաւ զնել փող ունենալու համար, բայց այդ թագին համար մեծ գումար մը չի պիտի կրնար ստանալ, որովհետեւ նա ոչ ոսկի էր և ոչ ալ արծաթէ, այլ պարզապէս պղծոյճէ:

Այդ մտադը՝ փլէվայի պատերազմէն յափշտակուած լմորանոթէ մը առնուած էր: Ընդհակառակը Ուիլհելմին փոքրիկ թագուհին իւր սիրուն գլուխը կրնայ զնել եւրոպական ամենաթանկագին թագը:

Կըսուի թէ այդ թագուհւոյն թագը երեսուն միլիոն ֆրանքէն աւելի կ'արժէ: Սակայն Ասիական մի քանի վեհապետներու թագերը այդ գումարէն աւելի կ'արժեն եղեր: Ի միջի այլոց կը յիշուի հնդկաստանի իշխանագունի մը թագը որ երեսուն և հինգ միլիոնէն աւելի կ'արժէ: այս պարագային մէջ կ'արժէ որ մարդ թագի մը ետեւէն վագէ:

ՏՈՍՎՈՒՄՅԻ ԽՈՌՈՎԱՐԱՐՆԵՐԸ
Մոսկուայի խոսվումներն արարազուցիկները և այդ առթիւ ձերբակալուողները՝ քաղաքային դատարաններու առջև պիտի դատուին:

Պ. ՄԵԼԻՏՅՈՅ ԱՅՏՈՐՈՒՄԸ
Մոսկուայի Համալսարանի նշանաւոր ուսուցիչ Պ. Մելիթօֆ՝ Մոսկուայի վերջին յեղափոխական շարժումներուն մէջ զարման մասնակցութիւն ունեցած ըլլալուն՝ երկրէն արտարուած է:

ԳԱՆՎՈՐՈՒԹԻՒՆ
Սուլթանի դէմ զարհուրելի դաւադրութիւն մը գտած են: Ժեմթիւրքերէն կը կասկածին:

ՉԵՐՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
Սէն Քէթրպուրկի մէջ բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուած են վերջերս տեղի ունեցած խռովութեանց առթիւ:

Սաւորութիւնն է՝ կտակաց օրինաւոր կերպիւ և կտակարարին նպատակին և գիտաւորութեանը համեմատ գործադրութեանը հսկել:

Կտակաց Հոգաբարձութեան համար պէտք եղած մասնաւոր կանոնադրութիւնը՝ խառն ժողովը պիտի պատրաստէ կտակաց Հոգաբարձութեան և Տնտեսական խորհուրդին կարծիքն առնելով: և Ընդհանուր ժողովը պիտի հաստատէ:

Կտակաց Հոգաբարձութիւնը որոշեալ ժամանակներ իր պատճենին վերաբերեալ հանձնարար պիտի ներկայացունէ Տնտեսական խորհուրդին, որ ստուգելով և վաւերացունելով կը հաղորդէ քաղաքական ժողովոյն:

6. ԿՏԱԿԱՑ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
Յօդ. 50. Կտակաց Հոգաբարձութիւնը կը բաղկանայ եօթն անձինքէ, որոց երեքը եկեղեցական և չորսը աշխարհական՝ խառն ժողովով կ'ընտրուին բուհից առաւելութեամբ: Կտակաց Հոգաբարձութեան պաշտօնն է՝ ազգային կտակաց անօրէնութիւնը: Իր պար-

կերակի օր վիճելով կայսրը ընդունած է Բրուսական Սենեկին Գիւսնը, որու անդամներուն խօսած միջոցին Պրէմի մէջ կատարուած յարձակման վրայ խօսելով ըսեր է թէ երիտասարդութիւնը անարարյակունացեր է. և թէ այդ յարձակման պատասխանատու է բոլոր Գերման ժողովուրդը առանց բացառութեան:

Կայսրը այս խօսքեր գէշ ազդեցութիւն ըրած են քաղաքական շարժումներուն մէջ, որոնք կայսրը ըսածները հայհոյանքի տեղ առած են, որ ուղղուած է բոլոր Գերման ժողովուրդին:

Կայսրը ըսած է գարձեալ թէ ազատական թերթերը շատ յախուռն կերպով կը քննադատեն կառավարութեան գործերը և այդ մասին իր զօգուհութիւնն է յայտնել:

Վերջապէս կայսրը յայտարարեր է թէ վիճելով Առաջին կայսրը մահէն յետոյ կայսերական թագին վարկը բաւականին ինկեր է: Բան մը որ ոչ կայսրը և ոչ ալ պետութեան գործերը վարրդ անձանց պատիւ կը բերէ:

ՄԱՆՎՈՐՈՒԹԻՒՆ
Մոսկուայի խոսվումներն արարազուցիկները և այդ առթիւ ձերբակալուողները՝ քաղաքային դատարաններու առջև պիտի դատուին:

Պ. ՄԵԼԻՏՅՈՅ ԱՅՏՈՐՈՒՄԸ
Մոսկուայի Համալսարանի նշանաւոր ուսուցիչ Պ. Մելիթօֆ՝ Մոսկուայի վերջին յեղափոխական շարժումներուն մէջ զարման մասնակցութիւն ունեցած ըլլալուն՝ երկրէն արտարուած է:

ԳԱՆՎՈՐՈՒԹԻՒՆ
Սուլթանի դէմ զարհուրելի դաւադրութիւն մը գտած են: Ժեմթիւրքերէն կը կասկածին:

ՉԵՐՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
Սէն Քէթրպուրկի մէջ բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուած են վերջերս տեղի ունեցած խռովութեանց առթիւ:

Սաւորութիւնն է՝ կտակաց օրինաւոր կերպիւ և կտակարարին նպատակին և գիտաւորութեանը համեմատ գործադրութեանը հսկել:

Կտակաց Հոգաբարձութեան համար պէտք եղած մասնաւոր կանոնադրութիւնը՝ խառն ժողովը պիտի պատրաստէ կտակաց Հոգաբարձութեան և Տնտեսական խորհուրդին կարծիքն առնելով: և Ընդհանուր ժողովը պիտի հաստատէ:

Կտակաց Հոգաբարձութիւնը որոշեալ ժամանակներ իր պատճենին վերաբերեալ հանձնարար պիտի ներկայացունէ Տնտեսական խորհուրդին, որ ստուգելով և վաւերացունելով կը հաղորդէ քաղաքական ժողովոյն:

6. ԿՏԱԿԱՑ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
Յօդ. 50. Կտակաց Հոգաբարձութիւնը կը բաղկանայ եօթն անձինքէ, որոց երեքը եկեղեցական և չորսը աշխարհական՝ խառն ժողովով կ'ընտրուին բուհից առաւելութեամբ: Կտակաց Հոգաբարձութեան պաշտօնն է՝ ազգային կտակաց անօրէնութիւնը: Իր պար-

7. ՀԻՒՄՆԻՆՈՅԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
Յօդ. 51. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը կը բաղկանայ ինն անձինքէ, զոր քաղաքական ժողովը կ'ընտրէ բուհից առաւելութեամբ: Ասոնց երկուքը վկայեալ բժշկ պիտի ըլլան:

Հիւանդանոցի Հոգաբարձութեան պաշտօնն է՝ Ազգային Հիւանդանոցը և անոր սեպհական կալուածներն ու եկամուտները տնտեսել: և անոնց հատկութիւն ու Ազգային Միտակին նպատակը մատակարարել պայն: Այս Հաստատութիւնը չորս շրջանակի բաժնուելով, մէկը՝ աղքատիկ հիւանդները զարմնեցու, երկրորդը՝ ձեր և անկար աղքատները պատուաբեղու, երրորդը՝ իշխաւորները ինամելու, և չորրորդը՝ որք և անտեղունջ տղաքը դաստիարակելու պիտի յատկանան:

Այս շէնքին կարգադրութիւնն ու տնտեսութիւնը բժշկական և առողջապահիկ կանոնաց համեմատ պիտի սնօրինուին: Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը այս Հաստատութեան անտեսութեան մասին Տնտեսական խորհուրդին, և գատիարակութեան մասին՝ Ուսումնական, խորհուրդին պատասխանատու է. և սոյն խորհուրդը որոշեալ ժամանակներ պիտի տայ իր գործողութեանց վրայ:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Անգղիոյ դահաժատանգ դարքը և զբաւեցնելու անյեղալ արրաթ օր Օձիւր զբաւանաւով Բօն-Սայիա հասան:

Ն. Բ. Խաիվին կողմէն՝ դարքը և զբաւեցնելու դիմաւորելու համար գնացած էին յատկապէս Մօհամէտ Ալի վաշա, Տայրա Խաթայի անօրէն Տէմարթիւնօ փաշա, Լորտ Գրօմլը, Ժէնէրալ Թալպօթ: Բաց աստի առ ի յարգանս Բարձրագատիւ հիւրերուն, 150 հեռակակ և 60 հեծելաղորաց գունդ մը զրկուած էր Կահիրէէն Բօն-Սայիա:

Շարաթ երեկոյ ժամը 7 ու կէսին գահաժառանգ դարքը շքեղ հացկերով մը տուաւ եգիպտական պատուիրակութեան, հետեւեալ օրը (Կիւրակէ) զբաւեցնելու հետ Բօն-Սայիաի կարևոր պորտուանները պատեղէ վերջը, երեկոյն ժամը 7 ու կէսին ուղղակի Սուեզ միկնեցաւ ուրկէ դարքը և զբաւեցնելու պիտի երթան Առէն, Բարկիւտայ Գլուխ և յետոյ Աւստրալիա:

Նոյնմեքի վերջերը պիտի վերադառնան Նիդրիա:

Յաւաշիկայ Մայիս ամսոյն սկիզբը Ն. Բ. Խաիվը վերջնականապէս պիտի մեկնի Ալէքսանդրիա, ամառուան եղանակը անցընելու համար:

ԾԱԽՈՒ ՀՈՂ

Այն-էլ-Շեմսի կայարանէն 12 վայրկեան հեռաւորութեամբ Բաֆր-կամուս անուն զիւղին առջև 10 ֆէտտան հող ծախու հանուած է Տիար Արմենակ Աստուածատուրեանի կողմանէ ամսական վճարումներով:

Սոյն հողը բաժնուած է 42 կտորի, իւրաքանչիւրը 1,000 քառակուսի մէթր տարածութեամբ և ամեն մէկ կտորը պիտի ծախուի 2,000 զրուշի:

Յատակագծին և այլ տեղեկութեանց համար զիմել առ Տիար Արմենակ Աստուածատուրեան ի Գահիրէ:

ԿԱԹՈՒԼԻԿ ԱՇԽԱՐՀԵՆ

ՎԱՏԻԿԱՆ ՅԱՅՏՆԱԳԵՍ ԿԸ ԽՕՕԻ.— ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՒՆ ԿԱՐՏԻՔՆ ԴՐ. ՄԷ ԳՈՒՐՍ ՀԱՒԱՏԱՅԵԼՈՑ ՀՕՄԱՐ.

(Շար. Թախորդ Թիւէթ և վերջ)

Այս ճշմարտութեանց անգէտ խոտափրօ յօդուածագիրը ոմանք պախարակեցին Վօն կարգինաւն և ուրիշ Անգլիացի եպիսկոպոսները՝ որք չհաւանեցան հոգեհանգստեան հանդիսար պատարագ մատուցանել և ուրիշ կաթոլիկ ձեւեր կատարել ի պատիւ յիշատակի և ի հանգիստ հոգոյ Անգղիոյ Բողոքական Վիգորիա թագուհւոյն: Հոգեհանգստեան պատարագները պարզապէս քաղաքային և արտաքին պատիւներ չեն, զորս սղջ մնացողները կ'ընեն հանգուցեալի մը համար, այլ կրօնական գործողութիւններ են անոնք, անոնք աղօթք են զոր կաթոլիկ Եկեղեցին կը մատուցանէ որպէս զի իր գաւակները կարենան ընդունուիլ ի յաւիտենական խաղաղութիւն արգարոց: Հետեւաբար, պահանջել իրաւունք ունենալ այս հանդիսար աղօթքին մէկու մը համար, որ հաւատացեցող հաղորդութեան բաժնուած մեռաւ, կամ նոյն իսկ կարծել որ մարդկային քաղաքագիտութեան կամ սխալ հասկըցուած հայրենասիրութեան պատճառներով, կաթոլիկները պարտաւոր են կաթոլիկ թագման ձեւերով պատուել այն թագաւորը կամ թագուհին որ կամովին և հրապարակաւ կ'ապրին ու կը մեռնին Բողոքական, պղծութիւն է, անմտութիւն է, Եկեղեցոյն շրթանց վրայ զնել է այնպիսի խօսքեր և բանաձևեր, որք այդպիսի պարագաներու մէջ սուս և կեղծ են միայն: Գոտի որ Բողոքականը կը մերժեն իրական Երեկայութիւնն ի Ս. Խորհուրդի Հաղորդութեան և բոլոր այն վարդապետութիւնները՝ որք կաթոլիկ Երեսարանին հիմը կը կազմեն, չեն կրնար պահանջել երբեք ի հանդիսար իրենց հոգիներուն մատուցումն այն Ձոհին (Պատարագ) զոր հրապարակաւ և շարունակ կը նշաւակեն իրքե հայհոյական կեղծիք մը և իրքե քեանակար խաբէութիւն մը: Գալով հանգուցեալ Վիգորիա թագուհին պարագային, գիտենք որ նա գլուխ էր Բողոքական Անկիթեան Եկեղեցոյ և կը գաւանդէ և պարտաւոր էր հաստատ պահել իր կրօնքին յօդուածները: Արդ, այդ յօդ-

Է. ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
Յօդ. 52. Թաղական խորհուրդները կը բաղկանան ըստ տեղոյն՝ հինգէն մինչև տասներկու անդամներէ:

Թաղական խորհուրդին պաշտօնն է՝ թաղին ժողովրդեան ազգային գործոց մասաւ կարարութիւնը. Եկեղեցոյ և Դպրատան Հոգաբարձութիւնը. աղքատաց խնամակալութիւնը. և աղքատաց մէջ պատահած վեճերուն ընտելութիւնն ու խաղաղարարութիւնը:

Իր պարտաւորութիւնքն են՝ թաղին Եկեղեցոյ պայծառութեանը ինամ տանել. թաղին մէջ թէ՛ աղէկի և թէ՛ մանչ տղայոց գատիարակութեան համար դպրատաններ հաստատելու վարք ընել. և թաղին կարօտեալ ընտանեաց ձեռնուորութիւն ընել:

Յօդ. 53. Ամեն թաղ մէկ մէկ Մասուկ պիտի ունենայ՝ Թաղական խորհուրդին սնօրէնութեանը տակ:

(Շարունակելի)

ուսմանը 31 րդ թիվը կը կարգադրուի թէ «Չորհերը կամ պատարագները, որոց համար կ'ընտրուի բազմանան ֆրիստոսի կը մատուցանէ վասն կենդանեաց և ննջեցեաց, ի թողութիւն մեղաց, հայհոյական առասպելներ և վասնգաւոր պատարագներ են»։ Հետևաբար կարելի է որ կաթոլիկ բազմանայր Պատարագ մատուցանեն՝ յաւնուն կենդանեաց ընդդէմը պատարագ մատուցանելու համար։ Ոչ, երբ հերետիկոսն իր հերետիկոսութեան մէջ կը մտնի, ընտ քստ օրինի չէ պատարագի մատուցումը։ Յիշեցէ՛ք Եկեղեցական Ժողովներու, Պապերու, և եկեղեցական հեղինակութեանց որոշումներն այս մասին։ Պատմորէի Բողոքական ֆարսիւնա թագուհիին հոգոյն համար մատուցուելիք պատարագն արդիւնք Գրիգոր ԺԶ. Պապը, յայտարարելով թէ Եկեղեցիին վարդապետութիւնն ու սովորութիւններն անփոփոխ են նաև այդ պարագային։ Երբ Յունուար 30ին, կաթոլիկ եպիսկոպոս մը Հոռոմայ Աթոսին հարցուց թէ իր թեմի Անգլիական գաղթականութիւնը կրնայ հոգեհանգիստ կատարել տալ ի յիշատակ Վիգորիա թագուհիին, հետեւապէս կորուզ պատասխանը տրուեցաւ։ — Ոչ, Հարցուեցաւ զարձեակ թէ պարզ աղօթք կարգաւ, երգ երգել, և քարոզ խօսիլ կարելի է. պատասխան տրուեցաւ։ — Ոչ, քանի որ աստուածային պաշտամունք է։ — Այս եղան է ապագայի իրաւաբանութիւնն Համական Եկեղեցոյն։ Սիւալ է թէ Պապին յատուկ արտօնութեամբ հոգեհանգիստ կատարուած ըլլայ ֆուպայի Սանդիսի քաղաքին, Օգոստ (Քանաուս) Մօնթրէալ (Քանաուս) Մալպայի, Քեթուանի կամ Պոպոնի կաթոլիկ մայր-եկեղեցիներուն մէջ։ Անոնք ինքնարեւոյր կատարելին սխալմամբ, առանց թոյլտուութեան։ Եկեղեցոյ համար անտարբեր զանազի կը նշանակէ յիշեալ կաթոլիկ եկեղեցականներուն արարքը, որք անփոփոխաբար սխալ հասկցուած ներդրամութիւն կը բարդեն»։

«Թայմզ» արտասպիտով «Չիլիլդա ֆաղգորք»-ի այս յօդուածը, կ'աւելցնէ իր կողմէ. — Ոչ-կաթոլիկ Անգլիացիք պէտք է երախտապարտ ըլլան Ժիզուիդական այս պաշտօնական թերթին, որ յայտնապէս կը յիշեցնէ Անգլիացի կաթոլիկներուն և համայն աշխարհի թէ, երբ կարգինալ Վճն «աննեղաշնակ թել» մը զարկաւ ցառոց տիեզերական համանուագին մէջ, Վիլբորթիա թագուհոյն մահուան առթիւ, ոչ թէ իր ազատ կամօք գործեց, այլ կատարեալ պէս հոյատակեցաւ պապական հրամանին։ Կարգինալ Նիւմանի և Մանինիի պէս ըստ ստիտ մարդիկ կը ջանային տարբեր զոյնով և տարբեր փայլով ներկայացնել մեզ կաթոլիկութիւնը, և բողոքականութեան ներողամտութիւնն հրաւիրել զեպ ի այն, որ չի փոխարինը սակայն»։

«Թայմզ» այս սողերը զրեւէ վերջ, կ'արտասպէ նաև հատուած մը 1894 Նոյ. 19 թուակիր «Ճիկար»-էն, Ալբերտայր Գ. Զարին մահուան առթիւ. — «Լիոնի, Պուուի, Ալպիի կաթոլիկ արքեպիսկոպոսները, և Սէն-Պիլըրի, Սէն-Պրիէրէ, Սէն-Տիէի, Պէլլէի, Նըվիտի, Մօնթրէի, Մոյի, Լանկոնի, Գրուայի, Շարպոի, Վալանսի, Կրընօպի, Նանսիի, Պրէզիլի են. կաթոլիկ եպիսկոպոսներն երկի (1814 Նոյ. 18) հրապարակաւ հանդիսատար աղօթքներ կարգաւ տուին կաթոլիկ եկեղեցիներուն մէջ ի հանգիստ հոգոյն Ալբերտայր Գ. Կայսեր Ռուսիոյ»։ «Թայմզ» փախար կը յայտնէ գիտնալու թէ ո՛րն է կաթոլիկ եկեղեցոյ անփոփոխ վարդապետութիւնը։

Ա. Զ. Դ.
Եղիպտոսի, Ալտասահմանի և կովկասի արդոյ բաժանորդներէն անոնք որ մինչև ցարդ վճարած չեն իրենց բաժանորդագրիները, կը խնդրուի որ հաճին անյապաղ վճարել։

Եղիպտոսի բաժանորդները կրնան Մանտա-Քուլթով ուղարկել իրենց բաժանորդագրիները. թերթին վերևը նշանակուած հասցէին։

ԿՈՒՋԷՔ ԲԱՂԴԵՐՆԻԴ ՓՈՐՁԵՆ

Գնեցէք ժողովրդական Տարեցոյցէն հատ մը, ուր շատ մը զուարճալի և օգտակար հատուածներու հետ կը գտնուի նաև զեղեցիկ բաղդացոյց մը պէտք եղած բացատրութեամբ։

Սոյն Տարեցոյցէն և Պարզ Օրացոյց զնէլ փափարքը թո՛ղ հաճին զիմել առ Տ. Օհան Խնտամեան, որ պատրաստ է ուրիշ ամէն տեսակ գրքերու մասին յանձնարարութիւնք փութով կատարել փոքրիկ կանխավճարով մը։

Շրջակայ քաղաքներէն Տարեցոյցի և Օրացոյցի մասին եղած յանձնարարութեան համար զրամի տեղ թըղթարքով կընդունուի

Տարեցոյցին զինը	10 Դր. սղ
Պարզ օրացոյցինը	2 "

Ա. Զ. Դ.

Շատերու կողմէ յայտնուած փափարքի մը գոհացում տալու և մեր ընթերցողներու գիւրտ թիւն մը ընծայելու նպատակով, այսուհետև մեր թերթը հատով պիտի ծախուի Շառա Ապու-Էլ-Ալիզի սիլզըր Պ. ԿԱՐՍ. ՊԵՏ ԵՐԶԵՆԻՍԵԱՆԻ խանութը ինչպէս նաև Գլոթ-Պէլլ փողոցի ծայրը և թըրամիլէյնրու կոյսրանին մօտ ծխավաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳՍԱՍՊԵԱՆԻ քով։

Le Gérant J. MUNIER

ՊԱՆԳ ԼԻՍԵԶ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ
Մ. ՍՈՍՈՅԵԱՆ

Լիոնի հանրաժանութի գրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եղիպտոսի գործակալնալ, Տ. Մկրտիչ Սոսոյան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վաստակութիւնը կը վայելէ։

Սոյն գործակալութիւնը, 11 Մեպո. թիւ իրեն յանձնուած և Լիոնի բարգաւառապետութիւնէն պաշտօնապէս վաւերացուած փոխանորդադրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ գրամական և ֆուէսի ֆոնդիէի, Վիլ աը Քարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, զանձառնելով մասկան չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պահեստի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած։

Փափարքները հաճին զիմել Նիւպատի վրայ փոստարան Ռարթարիի գրասենեակը։

Թղթակցութիւն և կամ գրամ զըրկել հետեւալ հասցէին։

Մ. ՍՈՍՈՅԵԱՆ
Ի ԳԱՀԻՐԷ

ԱՏԱՆԱՐՈՅԺ
Պ. ՆԻԿՈՂԻՍՏՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաթէ աը ըս Պարսի կից, Բ. Կարի, թիւ 9 գասիկինը։

Կը բժշկէ բերնի և ակուայի ամեն տեսակ հիւանդութիւնները։ Աղքատները ճրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9։

ՊԵԱՆԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.
ՍՄԵՐԻԿԵԱՆ ԳԵՐՁԱԿՆԵՐ
ՍՐԱՆՑ ԵՒ ՏԻԿԵԱՆՑ
ԵՒ ԶՆԻԱԿԻՏՈՒԹԵԱՆ ԳՊՐՈՑ

Ապիտի մեծ պոլուսային վրայ Տայրայի Սանիթի դիմացը, նախկին եկեղեցական գործիմեռու վաճառատնը։

Վերջերս Ամերիկայէն հաս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հաստարակութեան ինչ պատրաստ ենք գոհացնել մեզ գիւնդ Պատ. յաճախորդները, գործի մարբութեան, գինիքու շափաւորութեան և ճշգրտագոհութեան կողմէն։

Մեր գործատեղւոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագրութեան գասեր ամերիկեան ամենալեղիշին կատարելապարտած մէթոսով,

Մանրամանութեանց համար գիմել մեր դարձատեղին։

ՃԱՏԱՐԱՆ ՀԱՅՅԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳՈՋԱՆՃԵԱՆ
Շարա Ապու-Սապահ
Նիւու-Տնիվերեյ դիպարտմին դիմացը.

Օգտաւն ու զուարճալի գիրք մատուցուած փոքրէջ սպաս. համեզ ու մեղաբար կերակուրներու զանազանութիւնն, անխարդախ պատրաստութիւն. ճոխ ճաշացոյցակ մը գիրք մատուցի գինեթուղթ ահա՛ Գազանձեան եղբարց ճաշարանը։

Ով՛ որ կ'աղէ, փորձի համար մեկ անգամ թող գիմէ, վտաս պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի գաւնայ հոյկական ճաշարանին։

Տպա. «Միւրիւն».— Թ. Ս. Փափագեանի

Տ Պ Ա Ր Ա Ն

Ի ԳԱՀԻՐԷ

Ա.ՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակալով տարրանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցեւորմանք, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագրիւնք, նամակաղբիւնք, պահարաններ, հաշուեցուցակներ են։

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենալն խնամով եւ ճաշակատար սպագրորեամբ։

ԶՍՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ,